

Սեյրան Զ. Գրիգորյան
Բանասիր. գիյր. թեկնածու

ՇԱՐԼՈՏՏԱ ՇՈՒԼՑԻ ԿԵՐՊԱՐԸ Խ. ԱՔՈՎՅԱՆԻ
«ԴՈՐՊԱՏՅԱՆ ՕՐԱԳՐԵՐՈՒՄ»

Եվ Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմում*

Բանալի բառեր – Շարլոտտա Շուլց, սուվենիր, Եղիշե Չարենց, «Դորպատյան օրագրեր», գրաբար, մեմուարային գրականություն, Պոնիմոն, գերմանուհի, սեր, պոեմ, «Դեպի լյառը Մասիս», Թեոդոր Գրաս, Խաչատուր Աբովյան:

Մուտք

2023 թվականին լրացավ Խաչատուր Աբովյանի ամեղծվածային անհետացման 175-ամյակը: Նման տարեկիցները ավելի են ուժեղացնում հետաքրքրությունը մեծ անհատի կյանքի և ստեղծագործության, հատկապես՝ նրա խորհրդավոր անհետացման փաստի նկատմամբ:

Պատմագիտական և գրականագիտական հետազոտություններին առնչված՝ հայ հասարակական միտքը արձանագրել է խնդրի գեղարվեստական մեկնաբանության բացառիկ նմուշ՝ Եղիշե Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմը: Այն ստեղծվել և հրատարակվել է մեծ գործչի անհետացման 85-ամյակի տարում՝ 1933 թ.: Ինչպես գիտենք, նույն շրջանում Խ. Աբովյանի կյանքի ու գործի պատմաբանասիրական և գեղարվեստական իմաստավորմանը հետամուտ էր նաև Ե. Չարենցի ժամանակակիցը և գործընկերը՝ Ակսել Բակունցը: Նա ստեղծեց միաժամանակ և՛ պատմագիտական աշխատություն («Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը»»), և՛ վեպ («Խաչատուր Աբովյան»): Ե. Չարենցը բավարարվեց միայն գեղարվեստական գրվածքով՝ պոեմով, սակայն Խ. Աբովյանի կյանքն ու էությունը ճիշտ ըմբռնելու նպա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.01.2024:

տակով նա Ա. Բակունցից ոչ նվազ ջանադրությամբ է ուսումնասիրել գրողի ստեղծագործությունը, նրան վերաբերող վավերագրերը և փաստերը:

«Դեպի լյառը Մասիս» պոեմում Եղիշե Չարենցը պատկերում է Խ. Աբովյանի վերջին անքուն գիշերը: Գեղարվեստական հորինվածքին արժանահավատ բնույթ հաղորդելու նպատակով բանաստեղծը հենվել է գրողի արխիվի վրա: Իսկ կերպարի ամբողջականության համար նա մեջտեղ է բերել նաև Խ. Աբովյանի անձնական կյանքի հանգամանքները, հիշողություններն ու ապրումները: Դորպատյան շրջանի մարդկային շփումները, մասնավորապես՝ Ֆրիդրիխ Պարրոտի հետ ունեցած մեծ բարեկամությունը և գերմանացի գեղեցկուհի Շարլոտտա Շուլցի հանդեպ տածած զգացմունքները պատկերելիս Ե. Չարենցը մեծապես հենվել է ուսանողական տարիներին (1830-1835 թթ.) Խ. Աբովյանի գրած հիշատակարանի վրա, որը բանասիրության մեջ հայտնի է «Դորպատյան օրագրեր» վերնագրով:

Հակառակ նրան, որ պոեմի գրության շրջանում արբովյանական օրագրերն անտիպ էին, Ե. Չարենցին հաջողվել է դրանց ծանոթանալ արբովյանագիտական որոշ աշխատանքներից, հավանաբար՝ նաև ձեռագրերից: Այդ ճանապարհով նրան հաջողվել է ստեղծել երիտասարդ ուսանող Խ. Աբովյանի և Շարլոտտա Շուլցի սիրո հուզառատ պատմությունը, որի միակ սկզբնաղբյուրը «Դորպատյան օրագրեր» հուշագրությունն է: Չարենցն օգտագործել է նաև Աբովյանի՝ հրաժեշտից առաջ Շարլոտտայից ստացած հուշանվերը՝ սուվենիրը, որի ստեղծման հանգամանքները նույնպես բխում են արբովյանական օրագրերից:

Խ. Աբովյանի և Շարլոտտա Շուլցի սիրավեպը մեծ գրողի ողբերգական ճակատագիրը և առեղծվածային անհետացումը շրջապատող քնարական-հոգեբանական եզակի պայծառ էջերից է: Ուստի շատ հետաքրքիր է, թե այն ինչպես է արձանագրվել Խ. Աբովյանի ձեռքով և ինչպես է վերաիմաստավորվել Եղիշե Չարենցի կողմից: Որպես երկու գրողների գեղագիտական առնչությունների կարևոր և խիստ ինքնատիպ դրվագ՝ այդ պատմությունը արժանի է բանասիրական և գրականագիտական հանգամանակից քննության:

1. Եղիշե Չարենցը և Խաչատուր Աբովյանը

Համաձայն հեղինակային խոստովանությունների և գրականագիտական համընդհանուր գիտակցման՝ Եղիշե Չարենցը հազարամյա հայ գրականության ժառանգորդն ու զարգացնողն է: Վահագնի առասպելից մինչև իր ժամանակները ձգվող այդ ավանդույթների մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն նորագույն շրջանի հայ գրականության հիմ-

նադրի ստեղծագործական առնչությունները հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ժառանգության հետ:

1933 թ. փետրվարի 20-ին Եղիշե Չարենցը գրեց «Դեպի լյառը Մասիս» պոեմը, որը շուտով տեղ գտավ «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Պատմության քառուղիներով» բաժնում: Չարենցագիտությունը առավելապես ուշադրություն է դարձրել այս պոեմին: Իրականում այն Չարենցի սրբվյանական հետաքրքրությունների գլխավոր, բայց միակ փաստը չէ: Մասնավորապես, «Վերք Հայաստանի» վեպի հետ պատմափիլիսոփայական, գեղագիտական և ժանրային աղերսներ ունի «Երկիր Նաիրի» վեպը: Դրանց նույնպես անդրադարձել են գրականագետները՝ Սուրեն Աղաբաբյանից մինչև ժամանակակից ուսումնասիրողները: Իսկ ահա երկու դարակազմիկ վեպերի բնագրային առնչություններից առավել ուշագրավն այն է, որ «Վերք Հայաստանի» վեպը բացող Կրեստի պատմության հղումով է սկսվում Մագուրի Համոյի ձառերից մեկը Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի երկրորդ գլխում. «Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» իր հայտնի վեպում պատմում է, թե ինչպես Լիդիացվոց Կրեստս թագավորի համր լեզուն բացվում է մայրենի լեզվի հրաշալի հրաշքով»: Այսպես մանվածապատ, այսպես բանաստեղծական սկսեց իր այդ նշանավոր ձառը Մագուրի Համոն: Իմաստն այն է, պարզաբանեց նա հետո, որ հայրենագուրկ մարդու գոյությունը մի վերք է, մի յարա, իսկ մայրենի լեզուն – հրաշարար բալզամ»¹: Փաստական և մեկնաբանական միտումնավոր սխալներով հանդերձ՝ այս հատվածը կարևոր է որպես Կրեստի միֆական պատմության՝ Հերոդոտոսից մինչև Մովսես Խորենացի և Խաչատուր Աբովյան ձգվող հայկական արձագանքների փոքրիկ շարունակություն:

Խ. Աբովյանին անդրադառնալու մյուս դեպքերը, ներառյալ «Դեպի լյառը Մասիս» պոեմը, վերաբերում են 1930-ական թվականներին: Պոեմից մի քանի ամիս հետո բանաստեղծը գրում է «Խաչատուր Աբովյանի արձանին» քառատող իմաստալից ներբողը, որը նույնպես զետեղվեց «Գիրք ճանապարհի» ժողովածուում.

**Քո պատվանդանը փոքր է չափազանց:–
Բայց մե՞ծ էր արդյոք հերկը հայրենի,
Որի բարգավաճ գալիքին ընծա
Դու հանձարը քո և կյանքը բերիր**²:–

1 Չարենց Ե., Երկիր Նաիրի, Եր., Պետական հրատ., 1926, էջ 111:

2 Չարենց Ե., Գիրք ճանապարհի, Եր., Պետական հրատ., 1933, էջ 283:

Նույն 1933 թ. Ա. Բակունցի հետ կազմած «Հայ գրականության քրեստոմատիա» ձեռնարկում ընդգրկված են «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը և ևս երկու ճաշակավոր հատված՝ սովորողներին ուղղված հարցերով:

Այնուամենայնիվ, Ե. Չարենցի արվյանական հետաքրքրությունների բարձրակետը «Դեպի լյառը Մասիս» գրվածքն է, որտեղ քնարավիպական պոեմի ժանրով և պատկերների լեզվով անդրադարձ է կատարվում Խ. Աբովյանի կենսագրության և գեղագիտության չորս հիմնական հարցերի: Դրանք են **վերջին գիշերվա ընթացքը, սերը, վեպի ռուսական կողմնորոշումը և անհետացման վարկածը**: Հերոսի գիշերային դրամատիկ խորհրդածությունների միջոցով կերտվում են երկու սիրելի կերպարներ՝ գերմանացի բարերար Ֆրիդրիխ Պարրոտը և երիտասարդ հայ ռուսանդի սիրած էակը՝ ըստ չարենցյան տառադարձության՝ Շարլոտտա Շույլցը:

2. Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերը» որպես Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմի սկզբնաղբյուր

Ըստ պոեմի հղացման՝ Խ. Աբովյանը վերջին գիշերը անցկացրել է իր թղթերն ու տետրերը թերթելով՝ բանաստեղծորեն դառնալով սեփական ձեռագրերի առաջին ուսումնասիրողը: Գեղարվեստական այս հնարանքը, որ մեր լավագույն արվյանագետներից մեկի՝ Երվանդ Շահագիզի գրքի վերնագրի համաբանությամբ կարելի է կոչել բանաստեղծական «Դիվան Խաչատուր Աբովյանի», սկսվում է գրողի դորպատյան թողոնի քննությամբ: «Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից» մասում առաջինը խրատական կամ մոայլ ինչ-որ նամակներ են, որոնց բնութագրությանը հաջորդում է եզակիորեն լուսավոր մի կետ՝ սիրած աղջկա՝ գերմանացի պարմանուհու թղթե հուշանվերը.

**Սակայն նամակների դեղին դեզերում,
Ծալքերում նրանց փոշաբույր
Հանկարծ աչքին ընկավ մի գրություն գերող՝
Մի փոքրիկ թերթ կապույտ: –
Ինչպես ցողն է լինում ծաղիկների վրա՝
Թափանցիկ, վաղընչական ու գերող³:**

Այս դրվագում Ե. Չարենցը վերակենդանացնում է իրական-վավերական մի փաստաթուղթ՝ այն հուշանվերը կամ սուվենիրը, որ հրաժեշտից

3 Նույն տեղում, էջ 56:

առաջ Խ. Աբովյանին է նվիրել Շարլոտտա Շուլցը: Փոքր-ինչ ուշ բանաստեղծը նկարագրում է այդ արտեփաստի տեսքը և բնութագրում իմաստը: Իսկ մինչ այդ սուվենիրը դառնում է ազդակ՝ վերարտադրելու տասնվեց տարվա վաղեմության հուշերը գերմանացի պայծառ աղջկա հանդեպ տածած զգացմունքների մասին:

**Այդ թերթիկը կապույտ ալեկոծեց նրան
Հուշերով՝ չճաշակած մի քաղցրություն բուրդ...
Հիշեց: – Ե՛րբ էր արդյոք: – Դեռ ինքը՝ երիտասարդ՝
Լցված երազներով ու հույզերով,
Երևանից մինչև այն եզերքը հասած՝
Բռնակվեց անկարելի մի սիրով⁴:**

Սուվենիրը և սիրո ամբողջ պատմությունն ունեն ճշգրիտ աղբյուրներ: Այդ սերը պատմված է Խաչատուր Աբովյանի հիշատակարանում, որը կրում է «Դորպատյան օրագրեր» վերնագիրը և հիմնականում պարզ գրաբարով շարադրվել է 1830–1835 թթ.: Օրագրերը պահվել են Խ. Աբովյանի որդու՝ Վարդան Աբովյանի մոտ: Ա. Բակունցի և Ե. Չարենցի աբովյանական գործերի ստեղծման շրջանում՝ 1930–ական թթ, սկզբին, ձեռագիրը պահվում էր արդեն նրա որդու՝ Կոստանդին Աբովյանի տանը: Հետագայում օրագրերը և սուվենիրը գրողի ամբողջ արխիվի հետ հանձնվել են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին:

Շարլոտտա Շուլցի հետ Խաչատուր Աբովյանը ծանոթացել և մտերմացել է 1832 թ. ամռանը: Իր դորպատյան ընկերոջ, ուսուցչի և մտերմագույն բարեկամի՝ Թեոդոր Գրասի ու նրա մոր՝ Շարլոտտա Գրասի հրավերով նա Դորպատից մեկնում է Ռիգա, այնուհետև հյուրընկալվում Գրասների կալվածքում, որը գտնվում էր Պոնիմոն գյուղում: Գրասների բազմանդամ ընտանիքն ուներ որդեգրած երկու աղջիկներ: Մեկը Թեոդորի այրիացած հորաքրոջ դուստրն էր՝ Աննա Ռամը, մյուսը՝ Շարլոտտե անունով օրիորդը, որի կենսաբանական ծնողների մասին տեղեկություն չկա: Չարենցը պոեմում աղջկա անունը գրում է **Շարլոտտա** տառադարձությամբ, որ հայերենում բավական տարածված տարբերակ է: Իսկ ահա նրա աղջկական ազգանունը բանաստեղծը գրում է յ–ով՝ **Շույլց**, որ բացառիկ և անսովոր տառադարձություն է՝ թելադրված կա՛մ հեղինակային ընկալմամբ, կա՛մ ժամանակի ուղղագրության ազդեցությամբ: Խ. Աբովյանի ժամանակներից մինչև այսօր այդ ազգանունը գրվում է **Շուլց** ձևով: Մասնավորապես, միշտ այդ գրելաձևն է օգտագործված «Դորպատյան օրագրերում»:

4 Նույն տեղում, էջ 56–57:

Երկու պարմանուհիներին Խ. Աբովյանը օրագրերում կոչում է «մա-
ղամ Գրասի» «հոգեդաստերք»։ «... Յետ քարոզին նստի մ<աղամ> Գ<րաս>
առ հարՖին իւրով, և երգէ և հարկանէ սխրալի յոյժ զգործին։ Հայր մեր
շարադրեալ ոտանաւոր, և այլ երգք մաղթողականք. նմա ձայնակցեն յեր-
գելն և օրիորդն Շուլց և Աննայ, հոգեդաստերք նորա. և ես կանգնիմ առ
հարՖիւ նորա»⁵։ Օրագրերում հանգամանորեն պատմվում է հատկապես
տիկին Գրասի, նրա որդեգրած երկու աղջիկների և ընտանիքի հարազատ
դասեր՝ Մինայի (Վիլհելմինեի) մասին։

Պատահական չէ, որ Դորպատից բերած գրությունները թվարկելիս
Ե. Չարենցը առաջինը նշում է հենց օրագրերը («Օրագրեր, գրքեր, ձեռագ-
րեր...»)։ Դա բացատրվում է նրանով, որ «օրիորդ Շուլցի» և նրա հետ ունե-
ցած սիրավեպի միակ աղբյուրը Խ. Աբովյանի օրագրերն են, ավելի ստույգ՝
դրանց այն մասերը, որոնք գրվել են Ռիգա և Պոնիմոն կատարած երկու
ուղևորությունների օրերին։ Իսկ աբովյանական անտիպ մեմուարները որ-
տեղի՞ց էին ծանոթ Ե. Չարենցին, եթե դրանք պոեմի ստեղծման ժամանակ
հանրային սեփականություն չէին։ «Դորպատյան օրագրերը» առաջին ան-
գամ առանձին գրքով 1955 թ. տպագրվել է Երևանում։ Նույն տարում հիշա-
տակարանը տեղ է գտել Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի 6-
րդ հատորում։ Երկու հրատարակությունն էլ պատրաստել է գրականագետ
Ալիս Մանուկյանը։

Ե. Չարենցի օգտագործած հավանական աղբյուրները երկուսն են։

Առաջինը Ներսես Տեր-Կարապետյանի «Խաչատուր Աբովյան» ու-
սումնասիրությունն է։ Այն նախ լույս է տեսել «Լուսն» հանդեսի 1896-1897
թթ. համարներում, ապա և 1897 թ. առանձին գրքով տպագրվել Թիֆլի-
սում։ Հեղինակը Վարդան Աբովյանից վերցրել և, վերաշարադրելով կամ
անթաքույց բանաբաղությամբ, օգտագործել է Խ. Աբովյանի ձեռագիր հի-
շատակարանը։ Առաջին անգամ այդտեղ ենք տեսնում երիտասարդ հայի
սիրեցյալին։

Ն. Տեր-Կարապետյանը չի տալիս աղջկա պաշտոնական անուն-ազ-
գանունը՝ Շարլոտտա Դորոթեա Շուլց։ Շարլոտտա անունը, ի դեպ, օրագ-
րում որևէ ձևով չի տալիս նաև Խ. Աբովյանը։ Ամենից հաճախ նա օգտա-
գործում է «օրիորդ Շուլց» բնորոշումը և «Լոտտե» («Լոտտէ», «Լոտէ», «Լո-
տէ») կրճատ-մտերմիկ դիմելաձևը, որ շատ ընդունված է գերմանացիների
մոտ, ինչպես նաև գերմանական գրականության, մասնավորապես՝ Խ. Ա-
բովյանին շատ հոգեհարազատ Ֆ. Շիլլերի և Վ. Գյոթեի կենսագրության ու

⁵ **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատ. 6, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 222։ Այս հատորից կատարված հետագա մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ։

ստեղծագործության մեջ: «Դեպի լյառը Մասիս» պոեմի հեղինակից առաջ Ն. Տեր-Կարապետյանն է ընդգծված ուշադրություն դարձնում Խ. Աբովյանի և Լոտտեի սիրավեպին: Նա գրում է, «Գրասի երեք քույրերից (Մինա, Աննա և Լոտեն), ինչպես երևում է Լոտեն է շատ դուր գալիս և մինչև անգամ փոխադարձ սեր զգում: Շատ տեղ անունը չէ տալիս, այլ Լ. է դնում և անցնում»⁶:

Երկրորդ հավանական աղբյուրը բուն արվեստական ձեռագրերն են: Գրողի թոռը՝ Կոստանդին Վարդանի Աբովյանը, որի տանը մինչև գրական թանգարանում հանգրվանելը պահվում էին պապի թղթերը, Պիոն Հակոբյանին հետագայում պատմել է, որ «1930-31 թթ. Ակսել Բակունցը մի քանի անգամ դիմել է իրեն՝ պապի ձեռագրերի հետ ծանոթանալու խնդիրքով, և սիրահոժար թույլտվություն ստանալով՝ մի քանի օր անցկացրել է իրենց բնակարանում»⁷, ընդարձակ հատվածներ արտագրել: Նրա ուշադրությունն էին գրավում նաև «դորպատյան օրագրերը, որոնցից նա ընդարձակ քաղվածքներ է անում և անգամ հաղորդում ուրիշներին»⁸: Այդ ուրիշների թվում առաջինը պետք է որ լիներ Եղիշե Չարենցը, թեև մեծ է հավանականությունը, որ նա ինքն էլ անձամբ ծանոթացել է ձեռագրերին:

Պետք է նշել, որ Ն. Տեր-Կարապետյանի աշխատության մեջ մեջբերված են մի քանի հատվածներ, որոնք բացակայում են օրագրերի գիտական հրատարակության տեքստում: Դրանք ավելի են մեծացնում նրա գրքին և բուն ձեռագրերին Ե. Չարենցի ծանոթ լինելու հավանականությունը, մանավանդ որ առնչվում են Շարլոտտա Շուլցի չարենցյան մարմնավորման երկու գլխավոր հատկանիշներին՝ արտաքին շքեղ գեղեցկությանը և սիրող սրտերի զգացմունքների մեծ ջերմությանը: Առաջինի մասին Խ. Աբովյանը գրել է. «...Ծածկեմ զդէմ իմ զի մի այլք նկատեսցեն զօտար նշանս ինչ ի մեզ, այլ նորա թանգագին դէմք. նորա երկնատիպ քաղցր ակունք ոչ հեռանան յաչաց իմոց»⁹: Կարծես թե միայն Ն. Տեր-Կարապետյանի ուսումնասիրությունից հայտնի այս հատվածին ներդաշնակ է Շարլոտտա Շուլցի դիմագծերի և աչքերի չարենցյան նկարագրությունը, թեև այդ դիմանկարում, անկասկած, առկա են նաև բանաստեղծական երևակայության հարուցած հավելումներ.

6 Տեր-Կարապետյան Ն., Խաչատուր Աբովյան, Տիֆլիս, տպարան Մ. Շարաձեի և ընկ. Նիկ. 21, 1897, էջ 68-69:

7 Հակոբյան Պ. Հ., Աբովյանը և Բակունցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, N 2, էջ 52:

8 Նույն տեղում:

9 Տեր-Կարապետյան Ն., Խաչատուր Աբովյան, էջ 71:

**Եվ հանկարծ – այնքա՛ն պայծառ,
Կարծես այսօր լիներ, հենց հիմա –
Պատկերացավ նրան այդ անցյալը
Մի տեսիլի նման: –
Կանգնեց իր դեմ աղջիկը. – ոսկե գիսակներով,
Աչքերով, որպես երկնակամար,
Ատվածածնի նման պսակավոր,–
Ի՛նչ մեղսական ու հույլ տենչանքների համար
Բուսած, ինչպես ծաղիկ, անուշ ու անգրկելի...
Երիտասարդ էր. կուրծքը հեշտանքով լի,
Բարակ մատներն ինչպես սիրո տավիղ¹⁰:**

Ն. Տեր-Կարապետյանի մեջբերած մեկ ուրիշ հատված, որ դարձյալ չկա «Դորպատյան օրագրերի» 1955 թ. հրատարակության մեջ՝ երկերի լիակատար ժողովածուի 6-րդ հատորում, նույն բազմահատորյակի առաջին հատորի ծանոթագրություններում ներկայացված է որպես «Ետո՞ւր զվերջին համբույր հրաժարման» բանաստեղծության հաջորդ էջին Խ. Աբովյանի արած գրառում: Ահա այդ հատվածը. «Ոչ է աստ տեղի յիշել զամենայն վայելչութեանց պատահելոց ինձ ի Պոնիմոն առ սիրելոյն իմոյ Գրասի. այլ զիմ միտս այլ առարկայ պարապեցուցանէ նշանակել աստ. և ո՞վ նա. քոյր նորա չքնաղ, որ յօրէ ծանօթութեան իմոյ ընդ նմա, թուէր զամենայն բախտ իմ կենցաղական յինքեան գրաւել հրեշտակային: Նորա գոյացութիւն յապացուցի ի սիրտ իմ զայն սէր, զոր սիրտք անախտ միայն կարեն պարզել միմեանց...»¹¹:

Անհնարին սիրո, բաժանման անխուսափելիության, տանջալից գիշերների նման պատկերներ կան նաև օրագրերի գիտական հրատարակության բնագրում: Իրանց բանաստեղծական արձագանքն է «Դեպի լյառը Մասիս» պոեմի՝ Շարլոտտային վերաբերող հատվածի վերջնամասում տեղ գտած այս դրամատիկ պատկերը.

**Մորմոքում էր իր սիրտը անհուն ցավից,
Երբ դիտում էր պատկերն այդ մեղսալի...
Այդ ե՞րբ էր. երե՞կ էր, թե տարիներ,
Տասնամյակներ առաջ... Եվ ե՞րբ անցավ...
Ժամանակը հետո փոշոտ պատնեշ հինեց –
Եվ ինքը ամբողջը մոռացավ¹²:**

10 **Չարենց Ե.**, Գիրք ճանապարհի, էջ 57:

11 **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատ. 1, Եր., Հայկ.

ՄՍՌ ԳԱ հրատ., 1948, էջ 385:

12 Նույն տեղում, էջ 57:

Գեղարվեստական նուրբ համադրությամբ Ե. Չարենցը պոեմի սիրային դրվագում յուրացրել է սկզբնաղբյուրի և՛ փաստական նյութը, և՛ դրա հոգեբանական-գեղարվեստական մեկնաբանությունը: «Դորպատյան օրագրերում» կերտված Լոտտե-Շարլոտտայի կերպարը բնութագրվում է կանացի գեղեցկության հուզական փառաբանությամբ: Միրահարված Խ. Աբովյանի բառապաշարում ամենից սիրված մակդիրն է «քաղցրը»՝ «քաղցրիկ» նրբին տարբերակով հանդերձ («Քաղցր օրիօրդն Լոտտե», «քաղցր ակունք», «Օրն քաղցր», «Քաղցրիկ օրիօրդն Լոտտե Շուլց»): Հետաքրքիր է, որ մակդիրի իմաստային թելադրանքով Խ. Աբովյանը քանիցս օգտագործում է նաև «քաղցրություն» գոյականը՝ դրանով ավելի հաճախ բնութագրելով տիկին Գրասին, բայց երբեմն էլ՝ Շարլոտտա Շուլցին («քաղցրություն իւր բնդդէմ իմ»): Այս քաղցրությունը՝ որպես փոխաբերություն, բառացի փոխանցվել է Ե. Չարենցի պոեմի բնագիր («Հուշերով՝ չճաշակած մի քաղցրություն բուրող...»):

Օրագրերում բավական հաճախադեպ է նաև «հրեշտակ» փոխաբերությունը («Երկնառաք հրեշտակ», «հոգի այնպիսի մաքուր իբրև հրեշտակ», «բախտ իմ կենցաղական յինքեան գրաւել հրեշտակային»): Աղջկա հրեշտակային դեմքի և էության պատկերը ծնունդ է տվել պոեմի հերոսուհու սրբապատկերային դիմանկարին («Կանգնեց իր դեմ աղջիկը. – ոսկե գիսակներով, Աչքերով, որպես երկնականար»): Եթե աստվածամոր հետ համեմատությունը («Աստվածածնի նման պսակավոր») կարելի է համարել Ե. Չարենցի բանաստեղծական հղացումը կամ իր ամենասիրելի պատկերներից մեկի՝ աղջկան աստվածամոր հետ գուգադրելու ևս մեկ արտահայտություն, ապա «երկնականար» աչքերի բնորոշումը ակնհայտորեն բխում է արվյանական «երկնատիպ քաղցր ակունք» պատկերից:

3. Իրականը և գեղարվեստականը Շարլոտտա Շուլցի արվյանական և չարենցյան կերպավորման մեջ

Խնդրի գրականագիտական մեկնաբանության տեսակետից կարևոր նշանակություն ունեն նաև երկու բնագրերի միջև եղած ակնհայտ տարբերությունները: Դրանք էապես առնչվում են վավերագրականի և գեղարվեստականի հարաբերակցությանը, ինչպես նաև իրական նախատիպի և նրա գեղարվեստական կերպավորման յուրահատկություններին:

«Դեպի լյառը Մասիս» պոեմի այն ընթերցողներին, ովքեր ծանոթ չեն Խ. Աբովյանի կենսագրության մանրամասներին և չեն կարդացել նրա օրագրերը, կարող է թվալ, թե պոեմի հերոսուհին ապրել է Դորպատում, և այնտեղ են ծավալվել սիրային հարաբերությունները: Նույնիսկ կարող է թյուր տպավորություն առաջանալ, թե Շարլոտտա Շուլցը գերմանացի

աղջկա երևակայական կերպար է: Իրականում նա միանգամայն վավերական անձնավորություն է, որի մասին պատկերացում ենք կազմում գերազանցապես Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերից»: Խիստ որոշակի է նաև սիրո տեղագրությունը: Հայ ուսանող հերոսը նրան տեսել, հետը ծանոթացել և մտերմացել է մերձբալթյան Պոնիմոն գյուղում:

«Դորպատյան օրագրերը» արձակ վավերագրական գործ է, մեմուարային գրականության նմուշ: Ըստ այդմ՝ այն ներկայացնում է առավելապես սիրո իրական պատմությունը: Վերջինս բնութագրվում է **գեղարվեստական բաց տարածության** սկզբունքներով:

Գերմանացի շնորհալի և եռանդուն գեղեցկուհին պատկերված է Գրասների ընտանեկան միջավայրում, գյուղական տանը, այգում, դաշտերում: Խ. Աբովյանը ներկայացնում է Լոտտեի կերպարի կենցաղագրական և ազգագրական մանրամասները: Նա ունի արվեստագետի էություն. երգում է, նվագում կլավիր («Յերեկոյին յետ ընթերցան հարկանէ օրիորդն Շուլց գկլավիրն»), պարում գյուղացիների հետ և պարել սովորեցնում պատմողին, գրում ոտանավորներ: Նա շատ ընթերցասեր է և երաժշտասեր, կարողանում է իր երգերով ազդել մարդկանց տրամադրության վրա. «...Ուր հանդէպ ճրագի միայն ընթերնոյր Լօտտէ Շուլց գոտանաւորս, հայէր ի տետրակն և ի մթան երգելով պար գայր, առնելով զանազան շախալս. բազումք յերգոցն էին հրաժարականք, վասն որոյ տխրութիւն աւելի երևէր յաղթել զմեզ զամենեսին, քան ուրախութիւն» (279):

Լոտտեի կերպարը ներկայացված է նաև միջավայրի հետ ունեցած ընդհանուր հարաբերությունների մեջ: Նա խնամքով կատարում է տնային գործերը, մասնակցում այն հաճախադեպ հյուրասիրություններին, որ կազմակերպում էր բազմանդամ, հյուրընկալ և ավանդապաշտ ընտանիքը: Լոտտեն շնորհալի օրիորդ է, պատրաստում է ձեռագործ աշխատանքներ: Հյուրերից մեկի ծննդյան օրվա առիթով նրա գործած նվերի մասին Խ. Աբովյանը պատմում է ակնհայտ գոհունակությամբ՝ նույնիսկ նման կենցաղային շարժառիթով նրան բնութագրելով «քաղցրիկ» բառով. «Զաւորս չորս մնացին նոքա առ մեզ. զարժանաւոր աւորս, զորս ընդ նոցա անցուցաք, վայել համարիմ աստ նշանակել: Յուրախութիւն մեր ամենեցուն պատահի յայս միջոց տօն ծննդեան կնոջ պարոն Հիւտտելի ի 6 յուլիսի: Քաղցրիկ օրիորդն Լօտտէ Շուլց պատրաստի վասն այսր զազնի պարգև մի, զոր ինքն գործէ: Յերեկոյին նա երթայ ի փոքր Պոնիմոն տանելով ընդ իւր զծաղիկս. յառաւօտուն ի շաբաթի աւորն յ 7 ժամուն մեք ամենեքեան երթամք անդ շնորհաւորել զտօնն: Ի ճանապարհին խաղամք ընդ միմեանս» (277):

Պատմողական ձևերով են ներկայացված նաև երկու սիրող սրտերի հարաբերությունները: Դրվագներից մեկում պատմողը և Լոտտեն մյուս

աղջիկների հետ սեր են գուշակում ծաղիկների թերթիկներով. «Նա անցանի և մեք ստանենք ի մէջ արտօրէից: Աննայ առաջնորդէ մեզ. բազումք շախայի ընդ նմա վասն անհարթ ճանապարհին, ուր նա առաջնորդէ: Մեք հաւաքենք ծաղիկս. ծաղիկ մարգարէութեան. սպիտակաթերթ. Աննայ և Շուլց կամին նովաւ լուծանել վասն իմ գմտածմունսս ինչ: Ի միտս պարտ էր նշանակել զոք, որ սիրէր զիս: Նոքա հատանեն զթերթս ծաղկանն բանիս...» (226):

Թեկուզ և ոչ շատ հաճախ, օրագրերում հերոսները շփվում են երկխոսություններով («քաղցր զրուցատրութեամբ»): Իսկ «Դեպի լյառը Մասիս» պոեմում ո՛չ Շարլոտտա Շուլցը, ո՛չ դորպատյան ուսանողը որևէ բառ չեն արտասանում:

«Դորպատյան օրագրերում» սիրահարները հաճախ են շփվում իրար հետ: Նրանք քայլում են՝ ձեռք – ձեռքի տված. «...Միմիայն Շուլց տայ ինձ զձեռս իւր, վասն ճանապարհին անհաւասարութեան և առաջնորդեմ մինչև ի տուն: Հոգի շնչէր ինձ յամենայն նուագի այսպէս մերձաւորաբար և հաւատարիմ ձեռնակալելն և թևարկելն մեր ընդ միմեանս: Ի մտանելն մեր յայգին, նա շնորհակալութեամբ տանի զձեռն իւր յինչն» (236–237):

Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» ստեղծագործության մեջ նման էյիկական մանրամասներ չկան: Այն չափածո գործ է, այն էլ՝ քնարավիպական պոեմ, որ նախօրինակ բնագրի տասնյակ էջերի նյութը ներկայացնում է մոտ հիսուն տող կազմող ամփոփ բարձրակետային պատկերներով: Պոեմում որևէ բառ չկա Պոնիմոն գյուղի, Գրասների ընտանիքի, նույնիսկ տիկին Գրասի մասին, որ այնքան մեծ տեղ է գրավում աբովյանական օրագրության մեջ:

Իրականի և գեղարվեստականի հարաբերակցության, ինչպես նաև երկու բնագրերի միջև եղած սկզբունքային տարբերությունների առումներով էական նշանակություն ունի նաև սիրո ժամանակագրությունը:

Որպես սիրո պատմության հայելային անդրադարձ՝ «Դորպատյան օրագրերը» հատկանշվում է **գեղարվեստական բաց ժամանակի** օրինաչափություններով: Այն ճշգրտորեն արտացոլում է սիրո վավերապատումի ժամանակագրությունը: Մանրամասնորեն ներկայացված են սիրո նախապատմությունը և հանգամանքները: Դորպատում Խ. Աբովյանը մտերմացել է իրեն գրեթե տարեկից (ծնվել է 1806 թ.) դասախոս Թեոդոր Գրասի հետ, որին տեսել էր բարերարի՝ Ֆրիդրիխ Պարրոտի տանը: Նա եկել էր իր ծննդավայր Ռիգայից: Մասնագիտությամբ տնտեսագետ էր, ավելի ստույգ՝ գյուղատնտես: «Դորպատյան օրագրերի» առաջին տարվա՝ 1830-ի գրառումներում Թեոդոր Գրասը ամենաշատ հիշվող անձն է («յետ քանի մի աւուրց գալն առ իս սիրելոյն իմոյ Գրասի՝ զոր բազում անգամ տեսեալ էր ինձ առ բարերարն իմ», «Ներքին կապակցութիւն իմ ընդ այսմ Գրասի», «Մերձաւոր

բնակութիւն իմ ընդ սիրելոյն իմ Գրասի» և այլն): Ֆ. Պարրոտից բացի՝ նա է հոգում դեռ օտարական Խ. Աբովյանի թե՛ կենցաղային, թե՛ հոգևոր կարիքները: Խ. Աբովյանին սովորեցնում է գերմաներեն և աշխարհագրություն, նրան ծանոթացնում Հագենի, Ֆրիդլենդերի, Վալտերի և ուրիշ դասախոսների հետ:

Քննվող հարցի տեսանկյունից խիստ էական է, որ Խաչատուր Աբովյանը հենց Թեոդոր Գրասի հետ ունեցած մտերմության շնորհիվ է ճանաչում Շարլոտտա Շուլցին, որը նրա հոգեքույրն էր՝ մոր որդեգիրը: Նույն օրագրի առաջին էջերում Խ. Աբովյանը պատմում է, որ Թեոդորը մորը գրած նամակում պատմել է Աբովյանի մասին, և մայրը հեռվից հեռու սիրել է որդու հայ ընկերոջը: Ապա տիկին Գրասը նամակներ է գրել անձամբ Աբովյանին, նրա մասին պատմել որդիներին և դուստրերին: Հեռակա մտերմությունն այնքան է խորանում, որ «մադամ Գրասը» Աբովյանին առաջարկում է ամառային արձակուրդին գնալ իրենց տուն. «Գրելն նորա առ մայր իւր և առ ամենայն բարեկամս իւր: Ծանօթացուցանելն նորա զիս ամենայն ծանոթից իւրոց: Ուրախալից գրութիւն մօր նորա առ իս և որդի իւր բարուք հայիլ յիս. մայր նորա ցուցանէ զբազում ուրախութիւնս վասն յառաջդիմութեան իմոյ: Մայր նորա խնդրէ տանիլ զիս յամառան առ ինքն: Գրելն իմ առ մայր նորա և ցուցանելն զվիշտ իմ վասն ո՛չ ստանալոյ զորպիսութիւն ինչ յընտանեաց իմոց» (13):

Ե. Չարենցի պոեմում Թեոդոր Գրասի կերպար չկա: Չկա նաև գոնե թեթևակի որևէ ակնարկ Գրասների ընտանիքի մասին: Բանաստեղծի նպատակն այն է, որ ցույց տա երևանյան իր տնից վերջին անգամ դուրս եկող հերոսի հոգեկան աշխարհի մեջ կյանքի մի քանի կարևորագույն պահերի բեկումը: Դրանցից մեկն էլ գերմանացի գեղեցկուհու պայծառ կերպարն է, որը, պոեմի խնդրադրմանն ու ժանրին համապատասխան, տրված է **գեղարվեստական պայմանական տարածության և փակ ժամանակի** մեջ՝ առանց գործողությունների և մանրամասների: Քանի որ գիտենք կերպարի նախատիպն ու սկզբնաղբյուրը, հենց չարենցյան Շարլոտտայի էությունը և սիրո ենթիմաստները ավելի լավ ըմբռնելու համար պետք է գոնե համառոտ պատկերացնենք նախապատմությունը: Եթե Խ. Աբովյանի կյանքում չլինեին Թեոդոր Գրասը և նրա ընտանիքը, չէր լինի նաև այդ ընտանիքի փաստացի անդամ Շարլոտտա Շուլցը:

Գրասները ապրում էին Ռիգայում, բայց նրանք տուն և կալվածք ունեին նաև Պոնիմոն գյուղում, որը բաղկացած էր Մեծ և Փոքր Պոնիմոն մասերից: Գյուղի միջով հոսում է Նեմունիս (Նեման) գետը, որի անունից էլ «Պա» մասնիկի օգնությամբ առաջացել է գյուղի անունը: Տարբեր լեզուներում հանդիպում են գյուղի անվան գանազան ձևեր (Panemunis, Пономуне, Պոնիմուն): «Դորպատյան օրագրերում» Խ. Աբովյանը օգտագործում է «Պո-

նիմոն» գրելաձևը: 1818 թ. գյուղում է մահացել ընտանիքի հայրը՝ Կարլ Սոլոմո Գրասը: Թեոդորի ավագ եղբայրները՝ Վիլհելմը և Կարլը, շարունակում էին ապրել և աշխատել Ռիգայում, իսկ մայրը՝ Շարլոտտե (Շարլոտտա) Գրասը, մյուս զավակների հետ բնակվում էր գյուղում: Թեոդոր Գրասը հաճախ էր լինում Պոնիմոնում, որպեսզի օգնի մորը տնտեսության գործերում: Թեոդորը գյուղում էր, երբ Խ. Աբովյանը առաջին անգամ այցելեց իր նոր բարեկամներին: 1832 թ. հունիսին նա իր մեկ այլ մտերիմ դասախոսի՝ պրոֆեսոր Ֆրիդլենդերի հետ Դորպատից կառքով գնում է Ռիգա: Այնտեղ ջերմ ընդունելության է արժանանում Թեոդորի եղբայրների կողմից, ապա, ընկերոջը և նրա մորը հանդիպելու սրտատրոփ ակնկալիքով գնում Պոնիմոն, ուր հասնում է հունիսի 20-ին: Հենց այդտեղ և այդ ժամանակ էլ Խ. Աբովյանը ձանաչում և սիրահարվում է իր տենչանքի առարկային՝ Շարլոտտա Շուլցին, որ ցարդ անհայտ հանգամանքներում տեղափոխվել էր Պոնիմոն և որդեգրվել իր անվանակից տիկին Շարլոտտա Գրասի կողմից:

Մեկ տարի հետո՝ 1933 թ. հունիսի կեսերին, Խաչատուր Աբովյանը երկրորդ անգամ է այցելել Պոնիմոն՝ դարձյալ վայելելով Գրասների հետ շփվելու բերկրանքը, Շարլոտտա Շուլցի ներկայությունը վայելելու հաճույքը և հարկադիր բաժանման տանջանքը: Երկու ուղևորությունները, Պոնիմոնում ապրած օրերի պատմությունը մանրամասնորեն պատկերված են «Դորպատյան օրագրերում» և իսպառ բացակայում են «Դեպի լյառը Մասիս» պոեմում:

Շարլոտտայի կերպարի չարենցյան տարբերակի առանձնահատկությունները պայմանավորված են նաև նրանով, որ բանաստեղծը ընդհանուր առմամբ, ոչ փաստական մանրամասներով, այլ հոգեբանական մթնոլորտի կերպավորման նպատակով հաշվի է առել նաև ուրիշ աղբյուրներ: Ակնարկը վերաբերում է հատկապես Լոտտե-Շարլոտտա անվան մոգությանը, մասնավորապես՝ Ֆ. Շիլլերի սիրելի կնոջը և Վ. Գյոթեի ձակատագրական սիրուն: Երիտասարդ գերմանուհու հանդեպ տածած ողբերգական սերը պոեմում շաղկապվում է գերմանացի երկու հանձարների սիրո փիլիսոփայությանը: Այդ առումով նույնպես «Դեպի լյառը Մասիս» պոեմի վրա «Դորպատյան օրագրերի» թողած ներգործությունը բացարձակ չէ: Բայց բացարձակ չէ նաև տարբերությունը, քանի որ «Դորպատյան օրագրեր» գրվածքը և հատկապես Լոտտեի սիրո պատմությունը կրել են Շիլլերի և Գյոթեի, հատկապես՝ «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի ներգործությունը: Սիրուց տառապող հերոսի տենչանքի առարկան այդ վեպում նույնպես մարմնավորված է Լոտտե անունով հերոսուհու կերպարում: Աբովյանական սիրավեպը, ինչպես և մեծ վայնարցու վեպը, գրված է օրագրի ձևով:

Հետաքրքիր է, որ Շիլլերը և Գյոթեն (աբովյանական գրությամբ՝ «Գոթա») առկա են «Դորպատյան օրագրերի» բնագրում: Դրվագներից մեկում պատմողը և Լոտտեն այգում երգում են Շիլլերի մի սիրային երգը. «...Ի դադարիլ մեր սկսանենք օրիօրդըն Շուլց և ես երգել գերգս Մատրոգին (երգ հրաժարական), ամենեքեան յարտասուս հարկանեն, ոգոց հանելով. Թ<էօդոր> ամենևին հեռանայ, և մեք յետ երգենք գերգս Շիլլերի «Weit in Nebel <grauer>», երգ սիրոյ: Աստի լցեալ տխրութեամբ դառնամք ի տուն» (236):

Իրական նյութի գեղարվեստականացման առումով ինչ-որ դեր են խաղացել նաև Խ. Աբովյանի մյուս՝ ոչ օրագրային ստեղծագործությունները: Սիրո, վայելքի, բաժանման տառապանքների առումով զգալի նմանություն կա Ե. Չարենցի պոեմի և Խ. Աբովյանի՝ Շարլոտտայից հեռանալուց անմիջապես հետո նրան նվիրված «Ետո՞ւր գվերջին համբույր հրաժարման» բանաստեղծության միջև: Այդ բանաստեղծության առաջին երկու տները տպագրվել էին Ն. Տեր-Կարապետյանի «Խաչատուր Աբովյան» գրքում: Այդտեղից էլ դրանք հավանաբար ծանոթ էին Ե. Չարենցին: Իսկ ամբողջ բանաստեղծությունը նա կարող էր կարդալ անմիջապես ձեռագրից կամ Ա. Բակունցի արտագրած թղթերից:

«Ետո՞ւր գվերջին համբույր հրաժարման» բանաստեղծությունը ամբողջությամբ առաջին անգամ տպագրվել է Ե. Չարենցի մահվանից տասնմեկ տարի անց Խ. Աբովյանի երկերի բազմահատորյակի առաջին հատորում.

**Ետո՞ւր գվերջին համբույր հրաժարման
Քաղցրիկ վերջալոյս սիրուհւոյն իմոյ?
Շողեցե՞ր նմա լոյս մխիթարական
Ննջիլ զգիշերն հանգստեամբ հոգւոյ:**

**Ի դրան յայգւոջ թէ ի լուսամուտին,
Ուր ընդ թևովք քովք գրկախառնէսք
Ո՞ւր ետուր նմա զիմ ողջոյն կրկին,
Զիմ ալեկոծեալ սրտիս աղաղակ:
Միայնակ կացեալ ի հեռաստանէ
Հայիմ յայն սահման, ուր նա դադարի,
Ո՛չ կոծեմ գոք, ո՛չ ձայնս հասանէ
Պատմել զվիճակս, ուր կամ յերերի¹³:**

13 Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատ. 1, էջ 83:

Այս բանաստեղծությունը կարելի է համարել Շարլոտտա Շուլցի կերպարի, նրա և Խաչատուր Աբովյանի զգացմունքների չափածո վերարտադրության առաջին փորձը՝ արված հենց իր՝ Խ. Աբովյանի ձեռքով: Անկախ նրանից, թե Ե. Չարենցը ինչ չափով է հենվել այդ նախափորձի վրա, «Ետո՛ւր զվերջին համբույր հրաժարման» բանաստեղծությունը «Դեպի լյառը Մասիս» պոեմի յուրօրինակ նախապատմությունն է: Սիրուհու ուրվագծային կերպարը, հերոսի տագնապներն ու տարակույսները (դրանց ինքնատիպ արտահայտությունն է երկրորդ տողի վերջում հեղինակի դրած լատինական հարցական նշանը), ընդգծված զգացմունքայնությունը Խ. Աբովյանի բանաստեղծությունը և Ե. Չարենցի պոեմը մերձեցնող գեղարվեստական հատկանիշներն են:

4. Շարլոտտա Շուլցի սուվենիրը Ե. Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմում

Իսկ ամենամեծ ներգործությունը պոեմի վրա թողել է հենց իր՝ հեռուսուհու իրական նախատիպի ստեղծագործությունը: Այստեղ չափազանցություն չկա. «Դեպի լյառը Մասիս» պոեմի մի քանի առանցքային դրվագներից մեկի շարժառիթը, միջուկը, կերպարաստեղծման հիմքը Շարլոտտա Շուլցի պատրաստած թղթե հուշանվերն է՝ սուվենիրը, որը նրա արվեստագիտական խառնվածքի ուղղակի արգասիքն է՝ գեղանկարչական պատկերագարդմամբ և բանաստեղծական տեքստով: Այդ առումով ազդեցությունը անտարակուսելի է և բնագրային:

Ինչ-որ մի բարակ թել սուվենիրը կապում է հենց «Դորպատյան օրագրերի» հետ: Շարլոտտա Շուլցի սուվենիրը Խ. Աբովյանը ստացել է առաջին այցելության ժամանակ: Նա պատմում է, որ Պոնիմոնից Դորպատ վերադառնալուց առաջ ինքը Գրասների բազմանդամ ընտանիքի անդամներին, նաև նրանց ոչ սակավաթիվ ազգականներին ու հյուրերին բաժանել է թերթիկներ, որպեսզի հրաժեշտի խոսքեր գրեն իրեն: Խ. Աբովյանը ստացել է այդ մաղթանքները, բայց օրագրում պատմում է դրանցից միայն մեկի՝ Շարլոտտայի թերթիկի մասին: Տարբերությունն այն է միայն, որ օրագրում թերթիկը կարմիր է, պոեմում՝ կապույտ: Իսկ դրվագի էությունը և շրջապատող զգացմունքային մթնոլորտը շատ մոտ են պոեմում պատկերվածին. «...Անդ ի մէջ դրան միջին սենեկին կանգնի պարկեշտն, շնորհալիցն, խոհական օրիորդն Շուլց, կարմրագոյն թերթ իմ ի ձեռս իւր: Տեսեալ գնա կառիմ առ տեղւոջն, այլ նա սխրալի վայելչութեամբ մատուցանէ ինձ զթերթն՝ «բանիւս ի յիշատակ յինէս» և ասացեալ կնքէ զշրթունս, և գերեսս իմ ջերմ համբուրիւ իբրև զքոյր իմ, զոր մինչև ցայժմ ո՛չ էի ստացեալ ի նմանէ. ես կրկնեմ նմա զփոխադարձն և ընդ ջերմանալ շրթանց և այ-

տուց, հոսին և ջերմ արտասուք մեր, արտասուք վասն վաղուեան և ապառնի բաժանման» (234):

Փաստերի համադրությունը աներկբայորեն ցույց է տալիս, որ սուվենիրի նկարագրությունը Ե. Չարենցը կատարել է բնօրինակից: Շարլոտտա Շուլցի սուվենիրը՝ գերմաներեն գրություններով և պատկերազարդված, նույնպես պահվել է ժառանգների մոտ, իսկ այնուհետև՝ թանգարանում: 1967 թ. լույս տեսած «Խաչատուր Աբովյան» մենագրության մեջ Պիոն Հակոբյանը, ի թիվս այլ հուշանվերների, տալիս է այդ սուվենիրի նկարագրությունը. «Շարլոտտե Շուլցը թղթից հատել էր նուրբ, մանրանկար ծաղիկներ՝ կենտրոնում դնելով հույսի խորհրդանիշը՝ խարիսխ, իսկ վարն ավելացրել մի ոտանավոր...»¹⁴: 1968 թ. տպագրվեց Ե. Չարենցի երկերի չորրորդ հատորը, որտեղ, ծանոթագրելով «Դեպի լյառը Մապիս» պոեմը, Ա. Զաքարյանը հավաստում է, որ բանաստեղծը ծանոթ էր Աբովյանի ձեռագրերին և խնդրո առարկա գրությանը. «Անկասկած Չարենցը ծանոթ է եղել Աբովյանի ձեռագրերին. նկարագրում է ճիշտ այնպես, ինչպես կան ու պահպանվում են: Շարլոտտա Շուլցի այս նամակը՝ կապույտ թղթի վրա, գոթական գրերով, մանրանկարներով զարդարված, պահպանվում է ԳԱԹ Աբովյանի ֆոնդում»¹⁵:

Սակայն աղբյուրագիտական հավաստիության գլխավոր ցուցիչը «Գիրք ճանապարհի» ժողովածուի առաջին հրատարակության 54-րդ էջում զետեղված անվանաթերթն է, որի գրքային նկարազարդման մեջ Հակոբ Կոչոյանը պատկերել է նաև իրական հուշանվերը՝ գերմաներեն «Charlotte Schulz» կամարածև մակագրությամբ դիմանկարով, «Suvénir» գրությամբ պատկերազարդումով և դրա աջ ու ահյակ կողմերի ներքևի հատվածում գրված գոթատառ բանաստեղծությամբ: Չարենցը բանաստեղծորեն կերպավորել է հենց այդ վավերագիրը՝ այն քանիցս կոչելով «թերթ» կամ «թերթիկ» և երբեմն միայն՝ «սուվենիր»:

**Եվ ի՞նչ մնաց: –Այս թերթը ոսկերիզ,
Այս թերթիկը կապույտ, ինչպես անուրջը,
Ուր գրում է նա իր հրաժեշտի խոսքերը,
Այն ոսկեծամ աղջիկը – Շարլոտտա Շուլցը: –**

**Մի բաց կապույտ թերթիկ, վերևը զարդարած
Սուվենիրով խրթին ու մանրանկար,**

14 **Հակոբյան Պ. Հ.**, Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, էջ 515:

15 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 4, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 584:

**Եվ գոթական սուրսայր նշաններով գրած
Ոտանավոր մի խեղճ ու անքանքար¹⁶:**

Իրական Շարլոտտա Շուլցը ուներ բանաստեղծական խառնվածք և, ինչպես վկայված է «Դորպատյան օրագրերում», սիրել է կարդալ ոտանավորներ: Սուվենիրը ցույց է տալիս, որ նա նաև ինքն է գրել բանաստեղծություններ:

Աբովյանագիտության մեջ և լրագրային որոշ հրապարակումներում շրջանառվում է Շարլոտտայի սուվենիրին կից գրված գերմաներեն բանաստեղծության առաջին երկու տողերի արձակ թարգմանությունը, որը կատարել է Պիոն Հակոբյանը. «Մի՛ բողոքիր երջանկության չնչինությունից, ոչ մի վերք հավիտյան չի ցավում...»¹⁷: Իսկ դրանից շատ տարիներ առաջ Գերմանիայում ապրող, Դորպատի հայ ուսանողության հետազոտող նշանավոր բանասեր Արտաշես Աբեղյանը գրել է «Աբովյան և Դորպատ» աշխատությունը: Այն մնացել է անտիպ, բայց սփյուռքահայ մամուլում տպագրվել է մի հատված, որում հեղինակը տեղադրել է Շարլոտտա Շուլցի (բնագրում՝ «Շարլոտե Շուլց») բանաստեղծության չափածո թարգմանությունը.

**«Մի՛ տրտնջաք Դուք, մի՛ կոչեք ունայն՝ ամեն մի բերկրանք:
Հավետ չի մըխում, անանց չէ, անվերջ՝ ոչ մի հեծեծանք:**

**Սահող ժամերի անդորրիկ ծոցից
Ծաղկաբույր նո՛ր օր թող փթթի Ձեզ նորից:
Չափված է, ձևված՝ բոլորիս ճամփան,
Ե՛վ վայելք, և՛ վիշտ՝ են անցողակա՛ն:
Այդ լավ է, բարի՝ ամենքիս համար,
Չի՛ թողնի երբեք, որ մոռանանք մենք՝
Թե պարզ, սոսկական մարդ-էակներ ենք»¹⁸:**

Բանաստեղծությանը Շարլոտտան կցել էր հետևյալ արձակ բարեմաղթանքը. «Եվ այսպես՝ անպակաս արեք Հույսը Ձեր կենսական զորությունից, թող դրա մշտական ուղեցույցը լինի այն: Բարեկամությունն է ամուր խարիսխը Հույսի, որ և հենարանն է ապագայի համար կատարվող

16 **Չարենց Ե.**, Գիրք ճանապարհի, էջ 57–58:

17 **Հակոբյան Պ. Հ.**, Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), էջ 515:

18 **Աբեղյան Ա.**, Աբովյանի սիրային ապրումները Դորպատում (Մի էջ մեր «Աբովյան և Դորպատ» անտիպ աշխատությունից), «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն, 1975, N 18940, մարտի 16:

ամեն գործոն աշխատանքի Ուժի: Թող լավ ժամերով լի՛ լինի Ձեր կյանքը, և թող այս թերթիկը Ձեզ Ձեր հեռավոր երկրում ևս սիրալիորեն հիշեցնե Ձեզ Ձեր բարեկամուհուն՝ ՇԱՐԼՈՏԵ ՇՈՒՑԻՆ»¹⁹:

Որքան ձշգրիտ է Շարլոտտա Շուլցի սուվենիրի («խրթին ու մանրանկար») և ուղեկցող բանաստեղծության («Եվ գոթական սուրսայր նշաններով գրած») չարենցյան նկարագրությունը, նույնքան էլ չափազանցված ու անխնա է նրա բովանդակության բնորոշումը. «Ոտանավոր մի խեղճ ու անքանքար»²⁰: Դժվար թե տարիների հեռավորությունից Խ. Աբովյանն այդքան խստապահանջ ու դաժան դատեր սիրահարված աղջկա հրաժեշտի խոսքերի մասին: Թվում է՝ պոեմի տրամաբանությամբ մահվան եզրին կանգնած հերոսը դառնանում է, թե ինչու են պայծառ ու բերկրալից սիրուց մնացել միայն չափածո բառեր: Համենայն դեպս, ո՛չ իրական Խ. Աբովյանը, ո՛չ պոեմի հերոս Խ. Աբովյանը հենց այնպես դատողություններ չէին անի սիրած էակի ալբոմային ոտանավորի մասին:

Շարլոտտա Շուլցի բանաստեղծությունը վավերագիր է, որ թե՛ որպես սուվենիրի մաս, թե՛ ինքնին սիրո իրական պատմության գեղարվեստականացման ևս մեկ փորձ է, ինչպես «Դորպատյան օրագրերը» և Խ. Աբովյանի բանաստեղծությունները:

5. Սիրո հանգուցալուծումը և հերոսուհու հետագա ճակատագիրը

Հայտնի է, որ որպես բարետես, խելացի և զգայուն երիտասարդ՝ Խ. Աբովյանը դորպատյան տարիներին ունեցել է տասնյակից ավելի սիրավեպեր: Աղջիկներից մի քանիսը հիշատակված են նաև «Դորպատյան օրագրերում» (Յուլիե Կրաուզե, Ռոզալյա Վալց): Եվ ոչ էլ Շարլոտտա Շուլցի սուվենիրն է միակը: «Դորպատյան օրագրերում» Խ. Աբովյանն ինքն է պատմում, որ մտերիմներին իր ծոցատետրից պոկած թերթիկներ է բաժանել, որպեսզի հրաժեշտի խոսքեր գրեն. «...Ես բաժանեմ ամենեցուն՝ նոցա զթերթս ի ծոցագրե իմմե, գրել զբանս ինչ վասն իմ» (233–234): Հետո արդեն լրացված հուշանվեր–թերթիկները ստացել է նրանցից (այդ թվում՝ տղամարդկանցից): Խ. Աբովյանի արխիվում պահպանվել են այդ թերթիկները: Դրանց մեջ կան նաև սուվենիրներ այն աղջիկներից, որոնց նկատմամբ նա համակրանք է տածել: Օրագրերի գիտական հրատարակության ծանոթագրություններում նկարագրված է դրանցից մեկը, որ բավական նման է Շարլոտտա Շուլցի սուվենիրին. «Պահպանված է Ռոզալյա Վալցի

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Չարենց Ե.**, Գիրք ճանապարհի, էջ 58:

1833 թ. գրած ալբոմային թերթիկը, բանաստեղծությամբ և երկտողով՝ ուղղված Աբովյանին» (317):

Իսկ ինչո՞ւ մտերիմ աղջիկներից հենց Շարլոտտա Շուլցն է, իր սուվենիրով հանդերձ, դարձել Ե. Չարենցի պոեմի հերոսուհի: Բացատրությունը դարձյալ թաքնված է Խ. Աբովյանի օրագրերի մեջ: Շարլոտտայի նկատմամբ հայ ուսանողի ունեցած զգացմունքները ծավալվել են Դորպատից հեռու: Պոնիմոնի գյուղական մթնոլորտը, մերձբալթյան գյուղի ազատ միջավայրը, դասերից ազատ լինելը թերևս նպաստել են, որ երիտասարդ Խաչատուրը ազատություն տա զգացմունքներին:

Անկասկած, էական դեր է խաղացել Գրասների ընտանիքի հոգեզավակ լինելը, այն ընտանիքի, որի ղեկավար այրի Շարլոտտա Գրասին Խ. Աբովյանը մայր էր կոչում, իսկ Թեոդորին՝ եղբայր: Շատ սիրելով Գրասներին՝ նա, բնականաբար, սիրում է նաև նրանց որդեգրած աղջկան: Հետաքրքիր գուգադիպություն է, որ Շարլոտտայի և իր՝ Խ. Աբովյանի հոգևոր մոր անունը նույնպես Շարլոտտա էր: Կրկնվող սիրելի անունների այս մոգությունը ցուցիչն է խոր, տևական զգացմունքների, որոնց գոյության ու տևականության մեջ հայ երիտասարդը համոզվում է նրանցից հեռու ապրած մեկ տարվա ընթացքում: Հաջորդ տարի՝ 1833 թ., նա վերադառնում է Պոնիմոն և վերապրում որդիական սերը և սիրո զգացմունքը. «Պատուական տիկինն Գ-րաս» սստեալ ի դրան առ սեղանով անոյշ հայեցիք խնդայ ի վերայ հեռաստանէ երևելոյ մեր: Երկարութիւն միջոցին թուէր, թէ աւելի ևս ջերմացուցեալ էր զնա ի սէր կարօտութեան: Անպատմելի քաղցրութեամբ ողջունեալ նորա զիս, զանհամեմատ մայրենի սիրոյ իւրոյ զնշան ցուցանէ ջերմ գրկափարութեամբն իւրով և հետաքրքիր հարցափորձին զանցից մինչև ցայսօր կենաց և ճանապարհի մերոյ, ըստ այսմ և դստերք նորա, որպէս իսկականքն, նոյնպէս և հոգեկանքն, որոց կարօտութիւնն զամ մի բոլոր մաշեալ էր զիս:

Նորա հատուցանեն զայս սիրախառն համբուրիս իւրեանց, ի մէջ որոց առաւել մինն Լոտէ անուն օրիորդն» (273):

Այս ամենը և ուրիշ գործոններ նպաստել են, որ Շարլոտտան Խ. Աբովյանի համար դառնա սիրելիներից ամենասիրելին: Բայց դրա գլխավոր պատճառը եղել է աղջկա ներքին գեղեցկությունը, որի բացատրությունը հեղինակը տալիս է օրագրի մեջբերված հատվածի շարունակության մեջ. «Լոտէ անուն օրիորդն ազնիւ ո՛չ գեղեցիկ տեսեամբ, այլ գեղեցիկ ներքին յատկութեամբ» (273): Վերջին միտքը կարող է հասկացվել այնպես, թե իբր Շարլոտտան արտաքնապես այնքան էլ հրապուրիչ չէ, և տղային գրավողը նրա ներքին էությունն է: Բայց օրագրի զանազան մասերում ցրված են նույն սիրահարի վկայությունները ժպտադեմ աղջկա բարետես արտաքինի, գեղեցիկ աչքերի, աշխույժ շարժուձևի, հմայիչ պահվածքի

մասին: Ուստի վերոհիշյալ հակադրումը պետք է հասկանալ այն իմաստով, որ, ըստ Խ. Աբովյանի, Շարլոտտան գեղեցիկ է, բայց իր համար ավելի կարևորը աղջկա «գեղեցիկ ներքին յատկությունն» է: Այս մեկնաբանությունը ներդաշնակ է Ե. Չարենցի պոեմի հերոսի հիշողություններին:

Որպես սիրո կենդանի պատմություն՝ պոնիմոնյան սիրավեպը պարունակում է նաև որոշ լարվածություն, տատանումներ և կասկածներ: Երկրորդ այցելության սկզբում Խ. Աբովյանին թվում է, թե Լոտտեն սառն է ընդունում իրեն և միգուցե մոռացել է անցյալ տարվա իրենց գգվանքները. «Այլ նա երևեր մոռացեալ գոլով զանցեալ տարվան այնպիսի քաղցրութիւն իւր բնդդէմ իմ: Այս ցաւեցոյց զիս անչափ, ի բոլոր ընթացս, միմիայն ներքին թառաչք հեշտացուցանէին զարտաքին կսկիծս» (273): Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը փարատում է հերոսի կասկածները:

Ե. Չարենցը պոեմի հերոսուհի է դարձրել հայ ուսանողի տասնյակ սերերից այս մեկին, որովհետև հենց ինքը՝ Խ. Աբովյանն է Շարլոտտա Շուլցին համարել իր մեծագույն սերը: Դրա խոստովանությունը և բացատրությունը տրված են դարձյալ «Դորպատյան օրագրերում». «Քաղցր օրիօրդն Լօտտէ Շ<ուլց> կամի դառնալ ի տուն, ի հոգալ զպիտոյս անդ. ես խնդրեմ առաջնորդել նմա: Օրն քաղցր՝ այս մինն էր յերջանիկ ժամուց կենաց իմոց, գորս վայելեցի. գեղեցիկ օրիօրդք բազումք էին երևեալ ինձ, այլ համեստութիւն սորա, քնքուշ սիրտ, ազնուութիւն հոգւոյ, հեզ և պարկեշտ բարք միանգամայն գրաւեալ էին զհոգի իմ: Ես կալեալ զձեռն նորա առաջնորդեմ. ի բոլոր երակունս իմ եռայր սէր և կրկին սէր. երկինք և բոլոր շրջակայք թուէին ներդաշնակիլ ընդ մեզ ի ներքին զգայութիւն մեր: Ախ, մեք սիրէաք զմիմեանս...» (277-278):

Ամփոփապես հետո Խ. Աբովյանը ցավով մտածում է, որ բախտը իրենց չի միավորի: Թերևս սրանով է բացատրվում Շարլոտտային վերաբերող դրվագի ամփոփումը «Դեպի լյառը Մասիս» պոեմում: Հերոսը փոքրինչ անսպասելիորեն ուզում է ճնշել կամ պատառոտել սուվենիրը, բայց հրաժարվում է այդ դաժան մտքից.

**Ահավասի՛կ ամբողջը: – Երկա՛ր, երկա՛ր նայեց
Մուվենիրին նա նուրբ ու գրերին,
Ուզեց ճմլել այդ թերթը, ինչ–որ մի տեղ պահել,
Կամ պատառոտել նվերը,–
Սակայն թողեց. թաղեց թերթերում ա՛յլ,
Կամքի վերջին ճիգով քերեց խոհերից,
Եվ սկսեց թերթել զգաստությամբ մռայլ
Մյուս թերթերը հին՝²¹:**

21 **Չարենց Ե.**, Գիրք ճանապարհի, էջ 58:

Այս հանգուցալուծումով Ե. Չարենցը արձագանքում է արվյանական օրագրի հետևյալ եզրահանգմանը. «Երկնառաք հրեշտակ բարի սաւառնիւր զմեօք. նա ինձ՝ ես նմա հաղորդեմք զգացութիւն մեր, այլ անիմանալի ապառնին լցուցանէր զմեզ զերկոսեանս անհնարին ցաւօք: Արտասոււալից բաժանիմք ի միմեանց, և անարատ սիրտ նորա սիրել զնա բացարձակ: Այլ՝ եթէ դառն օրհաս ո՛չ միաւորեսցէ զմեզ ընդ միմեանս, ինձ անմոռաց մնասցէ այն օր, այն ժամ, յորս հոգի այնպիսի մաքուր իբրև հրեշտակ զայնպիսի բանս աղէտականս ի յիս յարոյց» (278):

Խաչատուր Աբովյանի կենսագրությունից հայտնի է, որ նա մտադիր էր ամուսնանալ գերմանուհու հետ: Դեռևս մինչև Շարլոտտայի հետ հանդիպելը Դորպատում տեղի է ունեցել հետաքրքրական դեպք, որի մասին Խ. Աբովյանը պատմում է նույն հիշատակարանում: Մի հավաքույթի ժամանակ գերմանացի տիկիններից մեկը առաջարկում է, որ հայ ուսանողը մի լավ գերմանուհի ընտրի, ամուսնանա և հետը տանի հայրենիք: Ու թեև Խ. Աբովյանը հավաստիացնում է, որ իր հոգևորական աստիճանը արգելք չէ, բայց մտահոգություններ է ունենում, թե օտար հարսնացուն ինչպես կհարմարվի տեղական պայմաններին: Այնուամենայնիվ, նա երազանքը գոնե մտքում ձևակերպում է այսպես. «...Զիա՞րդ ցանկայր այսմ սիրտ իմ, ունիլ յիրաւի զսիրելի ամուսին մի գերմանացի», որ նոյնպես օրինակ լինի ցիր ամուսնական կենցաղավարութեան աշխարհայնոց մերոց: Այլ ո՛հ, օրհաս դառնագին, ես ո՛չ ծնայ վասն այսր բախտաորութեան» (143):

Ամենից հավանական թեկնածուն կարող էր լինել հենց Շարլոտտա Շուլցը: Սակայն հեռավորությունը և ուսումը շարունակելու խնդիրը դարձան անհաղթահարելի խոչընդոտներ: Միգուցե խանգարեց նաև հոգևորական լինելու հանգամանքը: Համենայն դեպս, Ե. Չարենցը այդ գործոնը ակնարկում է «Դեպի լյառը Մասիս» պոեմում.

**Մռայլ հեռուներից եկած մի արեղա,
Ընտելացած խոհեմ երազի ու կյանքի –
Զգեցած սուրբ վարքի խստաբարո ուրար –
Դեմ հանդիման եկավ այդ տենչանքին անգին²²:**

Խ. Աբովյանը ամուսնացավ Թիֆլիսում, բայց դարձյալ՝ գերմանուհու հետ: Թե ինչ ձակատագիր ունեցավ նրա գերմանուհի կինը, գիտեն բոլորը: Իսկ ի՞նչ ձակատագիր ունեցավ նա, ում հոգեկան լույսը, անկասկած, ուղեկցում էր Խ. Աբովյանին ամբողջ կյանքում: Մեզ անհայտ են մնում նրա իսկական ծնողների ինքնությունը և որդեգրման հանգամանքները: Իսկ

²² Նույն տեղում, էջ 57:

ամուսնությունը և հետագա ճակատագիրը հաջողվում է ճշտել որոշ ուսումնասիրությունների և կենսագրական բառարանների օգնությամբ:

Թեոդոր Գրասի և նրա գերդաստանի մասին «Գերմանաբալթիական ընտանիքների ծագումնաբանություն» եռահատոր աշխատության երրորդ հատորում շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում բալթյան գերմանացիների ծագումնաբանության մասնագետ Էրիխ Զոյբերլիխը:

Երիտասարդ ուսանող Խաչատուր Աբովյանի համար օտարության մեջ երկրորդ մայր դարձած Շարլոտա Մարիա Գրասը շարունակել է ապրել Պոնիմոնում՝ հարազատ դստեր՝ Վիլհելմինեի և երկու ազգականուհիների՝ Աննա Էլիզաբեթ Ռամի և Շարլոտա Դորոթեա Շուլցի հետ: «Մադամ Գրասը» վախճանվել է Պոնիմոնում 1866 թ.:

Հայտնի է, որ անցյալում գերմանացիները երեխաներին երկու անուն էին տալիս: Խ. Աբովյանի «եղբայրը»՝ Յոհան Թեոդոր Գրասը, ծնվել է Ռիգայում 1806 թ. մայիս 29-ին: Ավարտել է Ռիգայի գավառական գիմնազիան: 1824-1828 թթ. փիլիսոփայություն և տնտեսագիտություն է սովորել Դորպատի համալսարանում: 1828-1830 թթ. հիվանդության պատճառով տեղափոխվել է Պոնիմոն: 1830-1833 թթ. շարունակել է ուսումը Դորպատում և հենց այդ ժամանակ էլ ծանոթացել ու մտերմացել է Խաչատուր Աբովյանի հետ: 1834 թ., ապա և 1846-1855 թթ. եղել է Պոնիմոնի կալվածքի կառավարիչը: 1835-1837 թթ. գյուղատնտեսություն է ուսանել Գերմանիայի, Շվեյցարիայի և Հոլանդիայի համալսարաններում: 1845 թ. մագիստրոսի վկայական է ստացել Դորպատի համալսարանում, իսկ 1856 թ. Էրլանգենի համալսարանում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1856-1872 թթ. Թեոդոր Գրասը աշխատել է որպես Դորպատի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր: Եղել է գյուղատնտեսության լավագույն մասնագետներից մեկը Լիվոնիայում: Հեղինակ է երկու մենագրությունների: 1854 թ. ամուսնացել է Մարիա Շվարցի հետ: Զավակ չի ունեցել: Թեոդոր Գրասը վախճանվել է 1872 թ. ապրիլի 5-ին Դորպատում:

Խ. Աբովյանի սիրեցյալը՝ Շարլոտա Դորոթեա Շուլցը, ծնվել է 1807 թ. փետրվարի 22-ին Ռիգայում: 1819 թ. տեղափոխվել է Պոնիմոն և հաստատվել Գրասների տանը: Նա եղել է «բանաստեղծորեն օժտված, միաժամանակ արտակարգ ինտելեկտուալ և տնտեսվար»²³: 1838 թ. ամուսնացել է իր հոգեեղբոր՝ Թեոդոր Գրասի եղբայր Վիլհելմ Ադոլֆ Գրասի հետ: Դա Վիլհելմ Գրասի երկրորդ ամուսնությունն էր: Առաջին կինը մահացել էր չորս տարի առաջ՝ թողնելով որդի և դուստր (աղջնակի անունը դարձյալ Շարլոտա էր): Վիլհելմ Գրասը վաճառական էր, ապրում և

23 Seuberlich E., Stammtafeln deutsch-baltischer Geschlechter, Bänden 3, Leipzig, 1931, s. 42.

առևտրով էր զբաղվում Ռիգայում: Խ. Աբովյանը Ռիգայում քանիցս հանդիպել է նրա հետ, մտերմացել և գրել նրա մասին նույն «Դորպատյան օրագրերում»: 1839 թ. ծնվել է Շարլոտտա Դորոթեա Գրաս-Շուլցի միակ զավակը՝ Էրիարդ Վիլհելմ Գրասը: Տիկին Շարլոտտա Գրաս-Շուլցը ապրել է 77 տարի: Վախճանվել է 1884 թ. դեկտեմբերի 12-ին: Նրա աճյունը ամփոփվել է Ռիգայի գերմանական գերեզմանատանը:

Եզրակացություններ

Խաչատուր Աբովյանի ստեղծագործության հետ Եղիշե Չարենցի ունեցած ժառանգորդական կապերի համապատկերում առանձնահատուկ տեղ է գրավում «Դեպի լյառը Մասիս» պոեմը: Գրականագիտության մեջ այն առավելապես վերլուծվել է կենսագրական և գաղափարական տեսանկյուններից: Քիչ ուսումնասիրված կարևորագույն իրողություններից մեկը պոեմի բնագրային շերտերի ծագումնաբանությունն է: Խոսքը վերաբերում է հատկապես անձնական, մարդկային շփումների և հարաբերությունների պատկերավորմանը: Պոեմը ստեղծելուց առաջ բանաստեղծը հանգամանորեն ծանոթացել է Խ. Աբովյանի դիվանին՝ ձեռագրերին և դրանց առնչվող մյուս փաստաթղթերին: Պոեմի ձևավորմանը մեծապես օգնել է ուսանողական տարիներին՝ 1830-1835 թթ., Խ. Աբովյանի շարադրած օրագրությունը, որը հայտնի է «Դորպատյան օրագրեր» պայմանական վերնագրով: Պոեմում գլխավոր հերոսի հիշողությունների միջոցով առաջինը ամփոփ անդրադարձ է կատարվում 1832 և 1833 թվականներին մերձբալթյան Պոնիմոն գյուղում ծնված ու խորացած սիրո պատմությանը և երիտասարդ ուսանող Խաչատուր Աբովյանի սիրած աղջկա՝ Շարլոտտա Շուլցի կերպարին:

Պոեմի գրության շրջանում «Դորպատյան օրագրերը» դեռևս անտիպ էին: Քանի որ այդ գրվածքը Խ. Աբովյանի և Շարլոտտա Շուլցի սիրո պատմության միակ աղբյուրն է, Ե. Չարենցը արբովյանագիտական որոշ ուսումնասիրությունների և, ամենայն հավանականությամբ, անմիջականորեն ձեռագրերի միջոցով ծանոթացել է այդ սկզբնաղբյուրին: Այդ են վկայում օրագրերի և պոեմի բնագրերի փաստական, ինչպես նաև գեղարվեստական որոշակի ընդհանրությունները: Սակայն Ե. Չարենցը չի գնացել սկզբնաղբյուրի պարզ ընդօրինակման ճանապարհով: Նա օգտագործել է նաև ուրիշ փաստեր, հատկապես հրաժեշտից առաջ Շարլոտտայի պատրաստած և Խ. Աբովյանին նվիրած թղթե հուշանվերը (սուվենիրը), Խ. Աբովյանի բանաստեղծությունները, ինչպես նաև Ֆ. Շիլլերի և Վ. Գյոթեի որոշ ստեղծագործությունների թելադրած զուգահեռները: Այդ ամենի շնորհիվ ստացվել է գրական ավանդույթների ինքնատիպ խաչաձևում: Մեկ դար առաջ հասկա-

նալի, պարզ, աշխարհաբարյան տարրերով հագեցած գրաբարով շարադրված մենուարային-վավերագրական արձակի հիմքի վրա Ե. Չարենցը բանաստեղծական մաքուր արևելահայերենով հորինել է չափածո ստեղծագործություն՝ քնարավիպական պոեմ: Սա արձակի և պոեզիայի խաչաձևման՝ հայ և համաշխարհային գրականության մեջ քիչ հանդիպող դրսևորումներից մեկն է:

Խ. Աբովյանի օրագրային ժառանգությունը սեփական ստեղծագործության գեղարվեստական բնագիր ներմուծելու չարենցյան փորձը նաև հեռանկարներ էր հուշում հայ գրականությանը: Պոեմից մոտ երկու տարի հետո սկսելով գրել Խաչատուր Աբովյանին նվիրված իր վեպը՝ «Դորպատոյան օրագրերի» փաստական և մեկնաբանական նյութը հմտորեն օգտագործել է նաև Ակսել Բակունցը: Այդտեղից է վեպի դորպատոյան մասի վերնագիրը՝ «Լիբեր Արմենիեր»: Նրան հենց այդպես՝ «սիրելի հայ» կոչականով են դիմում պրոֆեսոր Հագենի երեխաները. «Նոյնպես որդիք նորա մի առ մի փարեալ զինև՝ «արմէնիէր, լիբեր արմէնիէր» ելանէր ի բերանոյ ի բերան» (18): Գլխավոր հերոսի՝ հայ դիակոնուսի կերպարի էական գծերը, Դորպատի տեղագրությունը, սյուս գործող անձանց կերպավորման միջոցների զգալի մասը վերցված են Աբովյանի օրագրերից: Ե. Չարենցից հետո երկրորդ անգամ Ա. Բակունցը վերստեղծում է արովյանական սիրո պատմություն՝ «Դորպատոյան օրագրերում» պատկերված պրոֆեսոր Ֆրիդլենդերի տիկնոջ նախատիպի հիման վրա կերտելով Էլոիզ Աուլենդերի կերպարը: Այս դեպքում էլ արովյանական օրագրային ժառանգությունը նպաստել է մեկ ուրիշ ժանրի՝ պատմակենսագրական վեպի զարգացմանը:

Ակսել Բակունցի գեղարվեստական քայլը Եղիշե Չարենցի կանխագծած գրական լուծումների կենսունակության ևս մեկ, արդեն անուղղակի դրսևորում է: «Դեպի լյառը Մասիս» պոեմի հերոսուհի Շարլոտտա Շուլցի կերպարը «Դորպատոյան օրագրեր» ստեղծագործության մեծ արժեքի, ինչպես նաև Խաչատուր Աբովյանի հարուստ հոգեկան աշխարհի և մարդկային տաղանդի հավաստումն է:

Սեյրան Զ. Գրիգորյան (Երևանի պետական համալսարան) – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ նորագույն գրականության պատմությունը, հայ և համաշխարհային գրականության առնչությունները, գրական քննադատությունը: Գրականագիտական 8 գրքերի և 60-ից ավելի հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունները նվիրված են Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Վահագն Դավթյանի, Հրանտ Մաթևոսյանի և 20-րդ դարի հայ գրականության այլ ներկայացուցիչների ստեղծագործությանը:

Էլ. huugե՝ sgrigoryan@ysu.am

**THE CHARACTER OF CHARLOTTE SCHULZ IN THE KH.
ABOVYAN’S “DORPATIAN DIARIES”**

And in the Ye. Charents' poem “Towards Mount Masis”

Seyran Z. Grigoryan

PhD in Philological Sciences

Keywords: Charlotte Schulz, souvenir, Yeghishe Charents, “Dorpatian Diaries”, grabar, memoir literature, Ponimon, German woman, love, poem, “Towards Mount Masis”, Theodor Grass, Khachatur Abovyan.

The article examines the character of Charlotte Schulz in the “Dorpatian Diaries” by Khachatur Abovyan and in the poem “Towards Mount Masis” by Yeghishe Charents. Yeghishe Charents is the founder of the modern Armenian literature, and in his works, the literary heritage of Khachatur Abovyan, the founder of new Armenian literature, has played a special role.

On February 20, 1933, Yeghishe Charents wrote the poem “Towards Mount Masis”, which soon found a place in the “At the Crossroads of History” section of the “Book of the Way” collection. The poem is dedicated to the life and work of Khachatur Abovyan. The main focus is on the problem of Abovyan’s disappearance, but through the depiction of the last sleepless night and the dramatic thoughts of the hero, some important questions are raised. They include psychological issues in addition to political and intellectual ones. In the poem, Charents creates vivid images of Dorpat University professor Friedrich Parrott and the beloved girl of young student Khachatur Abovyan – Charlotte Schulz.

The source of the image of Charlotte Schulz was a memoir called “Dorpatian Diaries”, written by Khachatur Abovyan in simple grabar from 1830 to 1835. As a work of memoir literature, the diary depicts the acquaintance and love of the characters in the Baltic village of Ponimon (Panemune), the meetings, relationships, and feelings of an Armenian student and a young beautiful German woman. Charlotte Schulz is the adoptive sister of Khachatur Abovyan’s closest friend, Theodor Grass. Khachatur Abovyan writes the name of the heroine in the forms Lotte or young lady Schulz. Real facts and images of documentary prose in the poem “Towards Mount Masis” are used by the principle of poetic generalizations. Charents does not recreate the details of a

love story, not details and circumstances, but the essence of the characters and their feelings.

At the time of writing the poem, Khachatur Abovyan's "Dorpatian Diaries" was not published yet. It was first published in 1955 as a separate book and in the 6th volume of the complete works of Khachatur Abovyan. In this article we assume that as a source for creating the character of Charlotte Schulz, Yeghishe Charents could have used Nerses Ter-Karapetyan's study "Khachatur Abovyan", where there are many quotes and retellings of diaries based on the manuscript of this work. Another version is that Yeghishe Charents, like Nerses Ter-Karapetyan, was familiar with the manuscripts, which were then still kept by the writer's descendants.

An important role in the poem is played by one reliable artifact preserved in the archive of Khachatur Abovyan. That is Charlotte Schulz's souvenir. Its source is also the writer's diaries, but in the poem, it has a special artistic meaning. Through it, the main poetic principle of the poem operates – the synthesis of the real and the artistic. The poem focuses on the dramatic separation of lovers. The article makes an attempt to clarify this ending with the help of real biographical facts of Khachatur Abovyan and Charlotte Schulz.

Резюме

ОБРАЗ ШАРЛОТТЫ ШУЛЬЦ В «ДОРПАТСКИХ ДНЕВНИКАХ» Х. АБОВЯНА

И в поэме Е.Чаренца «К горе Масис»

Сейран З. Григорян
Кандидат филол. наук

Ключевые слова – Шарлотта Шульц, сувенир, Егише Чаренц, «Дорпатские дневники», грабар, мемуарная литература, Понимон, немка, любовь, поэма, «К горе Масис», Теодор Грасс, Хачатур Абовян.

В статье рассматривается образ Шарлотты Шульц в «Дорпатских дневниках» Хачатура Абовяна и в поэме Егише Чаренца «К горе Масис». Егише Чаренц – основоположник новейшей армянской литературы. В его произведениях особую роль играют творческие связи с литературным наследием Хачатура Абовяна – основоположника новой армянской литературы.

20-го февраля 1933 г. Егише Чаренц написал поэму «К горе Масис», которая вскоре была напечатана в разделе «На перепутьях истории» сборника

«Книга дороги». Поэма посвящена жизни и творчеству Хачатура Абовяна. Главное в ней – проблема исчезновения Абовяна. При изображении последней бессонной ночи через описание драматических размышлений героя автор затрагивает другие важные проблемы. Среди них есть не только идейные и политические проблемы, но и психологические моменты. Е. Чаренц в поэме создает светлые образы профессора Дорпатского университета Фридриха Паррота и любимой девушки молодого студента Х. Абовяна – Шарлотты Шульц.

Источником для создания образа Шарлотты Шульц стали мемуары под названием «Дорпатские дневники», написанные Хачатуром Абовяном на простом грабаре в 1830-1835-х гг. В дневнике, как произведении мемуарной литературы, описывается знакомство и любовь героев в прибалтийской деревне Понимон (Панемуне), встречи, взаимоотношения и чувства студента армянина и молодой красивой немки. Шарлотта Шульц – приемная сестра ближайшего друга Хачатура Абовяна Теодора Грасса. Имя героини Х. Абовян называет Лотте или молодая леди Шульц. Для изображения реальных фактов и образов в поэме Чаренца «К горе Масис», как и в документальной прозе, использован принцип поэтических обобщений. Поэт воссоздает не подробности любовной истории, не детали и обстоятельства, а сущность героев и их чувства.

Во время написания поэмы Чаренца, «Дорпатские дневники» Хачатура Абовяна еще не были опубликованы. Они впервые были напечатаны в 1955-ом г. отдельной книгой и в 6-ом томе полного собрания сочинений Х. Абовяна. В статье нами делается предположение, что как источник для создания образа Шарлотты Шульц Егише Чаренц мог использовать исследование Нерсеса Тер-Карапетяна «Хачатур Абовян», где есть множество цитат и пересказов отрывков из дневников, из текста рукописи этого произведения. Другая версия состоит в том, что Е. Чаренц, как и Н. Тер-Карапетян, был знаком с рукописями, которые тогда еще хранились у потомков писателя.

Важную роль в поэме играет один достоверный артефакт, сохранившийся в архиве Х. Абовяна. Это сувенир Шарлотты Шульц. Для его описания служат также дневники писателя, но в поэме он имеет особое художественное значение. Через него реализуется главный поэтический принцип поэмы – синтез реального и художественного. В поэме сделан акцент на драматическом расставании влюбленных. В статье мы пытаемся объяснить реалистичность такого финала с помощью биографических фактов из жизни Хачатура Абовяна и Шарлотты Шульц.

Օգտագործված գրականություն

1. **Աբեղյան Ա.**, Աբովյանի սիրային ապրումները Դորպատում (Մի էջ մեր «Աբովյան և Դորպատ» անտիպ աշխատությունից), «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1975, N 18940, մարտի 16:
2. **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատ. 1, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1948:
3. **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատ. 6, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1955:
4. **Չարենց Ե.**, Գիրք ճանապարհի, Եր., Պետական հրատ., 1933:
5. **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 4, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1968:
6. **Չարենց Ե.**, Երկիր Նաիրի, Եր., Պետական հրատ., 1926, էջ 111:
7. **Հակոբյան Պ. Հ.**, Աբովյանը և Բակունցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 2:
8. **Հակոբյան Պ. Հ.**, Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967:
9. **Տեր-Կարապետյան Ն.**, Խաչատուր Աբովյան, Տիփսիս, Տպարան Մ. Շարաձեի և ընկ. Նիկ. 21, 1897:
10. **Seuberlich E.**, Stammtafeln deutsch-baltischer Geschlechter, Bänden 3, Leipzig, 1931.

REFERENCES

1. **Abeghyan A.**, Abovyani sirayin aprunnerē Dorpatum (Mi ej mer “Abovyan ev Dorpat” ashkhatut’yunits’), “Hayrenik” orat’ert’, Boston, 1975, t’iv 18940, marti 16 (**In Armenian**).
2. **Abovyan Kh. A.**, Yerkeri liakatar zhoghovatsu ut’ hatorov, hat. 1, Yer., Haykakan SSR GA hrat., 1948 (**In Armenian**).
3. **Abovyan Kh. A.**, Yerkeri liakatar zhoghovatsu ut’ hatorov, hat. 6, Yer., Haykakan SSR GA hrat., 1955 (**In Armenian**).
4. **Ch’arents’ Ye.**, Girk’ chanaparhi, Yer., Petakan hrat., 1933 (**In Armenian**).
5. **Ch’arents’ Ye.**, Yerkeri zhoghovatsu vets’ hatorov, hat. 4, Yer., Haykakan SSR GA hrat., (**In Armenian**).
6. **Ch’arents’ Ye.**, Yerkir Nairi, Yer., Petakan hrat., 1926 (**In Armenian**).
7. **Hakobyan P.**, Abovyanē ew Bakunts’ē, “Banber Yerevani hamalsarani”, 1980, t’iv 2 (**In Armenian**).
8. **Hakobyan P. H.**, Khachatur Abovyan., Kyank’ē, gorts’, zhamanakē (1809-1836), Yer., HKhH GA hrat., 1967 (**In Armenian**).
9. **Ter-Karapetyan N.**, Khachatur Abovyan, Tp’khis, Tparan M. Sharadze ev ēnk. Nik: 21, 1897 (**In Armenian**).